գյուտ, խորագետ և ճարտարախոս, ամեն հնարներով օժտված էր, ամեն գործի մեջ հաջողակ էր, համառ և աներկյուղ: Իր թագավորելու ժամանակ հաջող ընթացան նրա գործերը, քանզի նրա հոր ժամանակ Ջոջանեթ երկիրը, որ Գիլանն է, ապստամբեց: Այս Աբասը գնաց հնազանդեցրեց, ենթարկեց իրեն: Իսկ ինքը գնաց Արտաբիլ ողորմություն բաժանելու նրա բնակիչներին:

Պահլավունի ազգը, որ օզբեկներն[44] են, գնացին Բուխարա և պարսիկներից առան Հրե քաղաքը: Շահ Աբասը զորքով գնաց, հալածեց նրանց և նրանցից շատերին կոտորեց. բռնեց նրանց թագավորի որդուն իր հետ առավ գնաց Խզիրան, որ Ղազվինն[45] է:

Սրա բոլոր գործերը ամենը անպակաս կերպով նկարագրել է Առաքել պատմագիրը: Ով կամենում է ստույգը իմանալ, թող կարդա այն (նրա գրածը) և նրանից սովորի: Իսկ ես ինչ որ լսել եմ այս Շահ Աբասի մասին, թե սուտ, թե առասպել, ճշմարիտ, թե իրավացի, ամենը կգրեմ, լինի պարսավանք կամ նախատինք, թե գոհություն կամ գովություն, թող լինի նրանց համար, որոնք մեզ պատմեցին, քանզի նրանք, որ ականատեսներ էին, ստույգը պատմեցին, իսկ նրանք, որ ականջալուրներ էին, վայրիվերո ասացին, իսկ մենք ինչ որ լսեցինք, նույնը կպատմենք, լինի սուտ կամ ճշմարտացի:

ԳԼՈՒԽ ԺԱ
ՇԱՀԻ ԳՈՒԼՓԻՔԱՆ ԳՆԱԼԸ

Շահ Աբասը սովորություն ուներ երբեմն-երբեմն այլակերպվել և շրջել: Պատահում էր, որ ձիով և փայեկով (հետիոտն թիկնապահ՝ ծառա) գնում էր, ուր որ կամենում էր, երբեմն էլ մենակ էր գնում փերեզակի կերպարանքով, որ նշանակում է չարչի: Եվ այսպես շրջում էր մեծամեծների ու ռամիկների մեջ, հարցնում ու տեղեկանում էր ամեն ինչից՝ շահից ու երկրից, հարկերից ու ամեն բանից:

Ինչ-որ ժամանակ այնպես եղավ, որ Շահ Աբասը զորքով գնաց Գուլփիքանի սահմանները: Զորքը թողեց և հեծնելով ձի՝ առանձին շրջում էր: Ժամանակը Սուրբ Գևորգի պասի մոտերքն էր: Սաստիկ անձրև եկավ, թրջեց շահին և սպասավորին: Գնացին դեպի Գուլփիքան գյուղաքաղաքը: Երեկոյի մոտ էր, շահը տեսնում է մի մեծ

բակ երկփեղկ դռներով և ուղղվում է դեպի այդ դուռը: Ձիով մտնում է բակը և տեսնում է մի մարդ բաց պատշգամբի, որ այվանն է, ներքևում նստած: Ողջունելով ասում է. «Շահի սիրո համար ընդունիր ինձ, քանի որ ցրտից մրսեցի»: Մարդը ասում է. «Քանի որ շահին հիշեցիր, իջիր ձիուցդ»: Եվ այդ մարդը կանչեց իր ծառային և ասաց. «Այդ ձին և սուրհանդակին լավ կնայես», իսկ ինքը առնելով շահին մտնում է մի զարդարված տուն: Եվ շահի հագուստները հանելով՝ ուղարկում է տուն և ասում, չորացրեք դրանք՝ և բերելով մի սամույրե մեծ մուշտակ՝ գցեց նրա վրա: Եվ ծիծաղելով ասում է. լա՞վն է: Հյուրը ասում է՝ այո՛, լավն է: Մարդն ասում է՝ ինչո՞ւ լավ չպիտի լինի (բառացի ինչպե՞ս լավը չի), բոզի կավատ, որ նշանակում է դուռումսաղ:

Դարձյալ մարդը հարցնում է, եթե կրակ անենք, լա՞վ կլինի: Հյուրը ասում է, այո՛, լավ կլինի: Մարդը ասում է, հիրավի լավ կլինի, կավատ: Եվ հրամայեց ակութը վառել: Եվ դարձյալ ասում է մարդը. եթե խորոված անեմ, լա՞վ կլինի: Շահը ասում է՝ լավ կլինի: Մարդը ասում է. հիրավի լավ կլինի, կավատ:

Եվ այսպես ասում էր մարդը, և այսպես պատասխանում էր շահը: Եվ ինչ որ ասում էր մարդը (արեց), խորտիկներ պատրաստեց, բերեց գինի, նստեցին ուտելու և ըմպելու: Եվ խոսում էին աշխարհի, շահի մասին, իսկ մարդը միշտ իր լավ գոհունակությունն էր հայտնում շահից: Եվ այսպես խոսեցին մինչև կեսգիշեր: Ապա բերել տվեց թանկագին անկողիններ շահի և իր սպասավորի համար և ասաց ներսից դուռը պետք է փակել, իսկ ձիու մասին ասաց՝ չհոգաք: Եվ քնեցին մինչև առավոտ (բնագրում՝ եկաց մինչև զառաւոտն, ըստ ձեռագրի): Երբ լույսը բացվեց, շահը մարդուն ասաց. «Ասա, ի՞նչ ես ծախսել մեզ վրա, որ գինը վճարենք»: Մարդը ասում է. «Աստված չանի, որ շահի անուն հիշողը և Աստծու եկած հյուրը մի պատառ հաց ուտի, դրա գինը առնեմ և կորցնեմ իմ (երկնային) վարձատրությունը»: Եվ այսպես ճանապարհ դրեց նա: Բայց շահը հարցրեց նրա ծառային, թե ի՞նչ է քո տիրոջ անունը: Իսկ նա պատասխանեց, թե Ալլահվերդի է կոչվում:

Եվ շահը այնտեղից ելավ գնաց իր տեղը. և երեք մարդ ուղարկեց Գուլփիքան՝ այսինչ տունը, և ասաց՝ գնացեք տան տիրոջը ասեք, թե շահը հրամայել է, որ դու գնաս շահի մոտ: Իսկ եթե հարց-